ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 14-ի թիվ 01/7-Լ որոշմամբ[1] հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 2.2-րդ, 2.4-րդ, 2.5-րդ և 6.2-րդ կետերով.

- հաշվի առնելով Պալատի նախագահի 10.11.2014թ. թիվ 374-Ա որոշմամբ հաստատված մրցույթին մասնակցելուց ազատված հանրային պաշտպանների ցանկը, որի համաձայն մրցույթին չեն մասնակցելու 41 հանրային պաշտպան, այդ թվում 20-ը մարզերից.

- **արձանագրելով**, **որ մրցույթը կազմակերպվում է Երևան քաղաքում քրեական ուղղվածության երեք**, **քաղաքացիական ուղղվածության մեկ և մարզերում չորս լրիվ** (**Արարատ**, **Լոռի**, **Արագածոտն**, **Գեղարքունիք**) **և երեք կես** (**Վայոց Ձոր**, **Կոտայք**, **Սյունիք**) **հաստիքի համալրման համար**.

- միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ անհրաժեշտության դեպքում հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ ժամավճարային դրույքաչափեր նախատեսող աշխատանքային պայմանագրեր կնքելիս որպես կանոն նախապատվությունը տրվելու է հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված փաստաբաններին.

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացնել երկու մրցույթ, այն է՝

1) քաղաքացիական և վարչական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ, որի գրավոր փուլը տեղի կունենա 2014 թվականի դեկտեմբերի 3-ին, իսկ հարցազրույցը՝ 2014 թվականի դեկտեմբերի 15-ին.

[1] 16.10.2014թ. խմբագրությամբ (փոփոխված Պալատի խորհրդի 16.10.2014թ. 28/12-Լ որոշմամբ):

2) քրեական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ, որի գրավոր փուլը տեղի կունենա 2014 թվականի դեկտեմբերի 3-ին, իսկ հարցազրույցը՝ 2014 թվականի դեկտեմբերի 15-ին:

2. Մրցույթների անցկացման վայր սահմանել ք. Երևան Զաքիյան 2, 3-րդ հարկ («Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամ):

3. Մրցույթների գրավոր փուլերի տևողության ժամկետը սահմանել 4 (չորս) ժամ:

4. Մրցույթներին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են սույն որոշման ընդունման պահից մինչև 2014 թվականի **նոյեմբերի** 28-**ը** ներառյալ (աշխատանքային օրերին 10.00-ից մինչև 17.00-ն): Դիմումները կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (հասցեն՝ ք. Երևան, Զաքիյան 2) առձեռն կամ փոստով:

5. Հաստատել մրցույթին մասնակցելու համար դիմումի ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

6. Հաստատել մրցույթի քննական թերթիկի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

7. Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝

1) մրցույթի անցկացման վերաբերյալ Պալատի անդամներին տեղեկացնել Պալատի ինտերնետային կայքէջում և Պալատի վարչական շենքում (հասցեն՝ ք. Երևան, Զաքիյան փող. 2) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա հայտարարությունը զետեղելու միջոցով.

2) օժանդակել մրցութային հանձնաժողովին մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

12 **նոյեմբեր** 2014**թ**.
թիվ 375-**Լ**
ք. **Երևան**

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
12.11.2014թ. թիվ 375 -Լ որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻՆ
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ
ՁԵՎ

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահին

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ,
փաստաբան_____-ից
(անուն, ազգանուն)
արտոնագրի N_____
Մասնագիտական ուղղվածությունը _____
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

Աշխատավայրը _____
(Նշել ՀՀ համապատասխան մարզը և/կամ քաղաքը)

Դ Ի Մ ՈՒ Մ

Ցանկանում եմ մասնակցել _____
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

ուղղվածության _____ մարզում (քաղաքում) հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով կազմակերպվող մրցույթին:

Հայտնում եմ, որ տիրապետում եմ համակարգչային հմտություններին:

Միաժամանակ, հայտնում եմ, որ համաձայն եմ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 14-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ով նախատեսված դրույթների հետ:

Կից ներկայացվում է՝

☐ գունավոր լուսանկարը 3x4 չափսի:

Դիմող՝_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

«____»_____20____թ.

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
12.11.2014թ. թիվ 375 -Լ որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ
ՁԵՎ

ՔՆՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Լուսանկար Կ.Տ.	Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով _____ ուղղվածության (նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական) _____ մարզում (քաղաքում) մրցույթին մասնակցող հավակնորդ _____: (անուն, ազգանուն)

1. Քննության անցկացման վայրը՝ ք.Երևան, Զաքիյան 2 (3-րդ հարկ):

Գրավոր քննության անցկացման ամսաթիվը_____, քննության սկիզբը (ժամը)_____: Տևողությունը 4 (չորս) ժամ:

2. Հարցազրույցի անցկացման վայրը՝ ք.Երևան, Զաքիյան 2 (4-րդ հարկ):

Հարցազրույցի անցկացման ամսաթիվը_____, քննության սկիզբը (ժամը)_____:

Քննությանն անհրաժեշտ է ներկայանալ սույն քննական թերթիկով և անձնագրով կամ փաստաբանական գործունեության վկայականով:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի աշխատակազմի ղեկավար՝

Կ.Տ.